ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-7/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

22-ը հունվարի 2020թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, Հ. Մելիքյան(ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲԱ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, Ս. Պետրոսյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և Պ բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան.
Բացակայում է ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ պետ, գնդապետ Ա. Մարգարյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-7/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-7/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Կապանի հաց» ՍՊԸ, «Աննա Դիանա» ՍՊԸ և «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ: «Կապանի հաց» ՍՊԸ կողմից ներկայացված հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են՝ հրավերով նախատեսված նմանատիպ պայմանագրերը առկա են, սակայն բացակայում են այդ պայմանագրերի (համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրությունները), կամ հանձման-ընդունման արձանագրությունները ներկայացված են ոչ ամբողջությամբ: «Աննա Դիանա» ՍՊԸ կողմից ներկայացված հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են՝ հրավերով նախատեսված նմանատիպ պայմանագրերը առկա են, սակայն բացակայում են այդ պայմանագրերի (համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրությունները), կամ հանձման-ընդունման արձանագրությունները ներկայացված են ոչ ամբողջությամբ: «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ կողմից ներկայացված հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են՝ ներկայացված պայմանագրերում հրավերով նախատեսված նմանատիպ համարվող ապրանքների գումարը պակաս է ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: ՈՒստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 22.01.2020թ. ծանուցել մասնակիցներին ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները, բացառությամբ Ա/Ձ Անահիտ Անտոնյանի, որի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԾՁԲ-20-7/2» ծածկագրով ԲՄ ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, բացառությամբ Ա/Ձ Անահիտ Անտոնյանի, որտեղ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկից:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 01.02.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Կապանի հաց» ՍՊԸ, «Աննա Դիանա» ՍՊԸ և «ՀԱԴՐՈՒԹ-1» ՍՊԸ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-7/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-7/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-20-7/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան